

ՄԻ ԶԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՆՈՐ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7739 ձեռագիր ավետարանի մասին է։ Այն բերվել է Կարինի Սանասարյան վարժարանից։ 1895 թ. ամռանը Հ. Աճառյանը՝ ձեռագիրն այդտեղ տեսել և նկարագրել է քառասուններկու ուրիշ ձեռագրերի հետ միասին՝ Նկարագրությունը՝ «Յուդակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին» վերտառությամբ հրատարակել է նախ «Հանդէս ամսօրեայ» ամսաթերթի 1896 թվահամարներում¹, իսկ ապա՝ առանձին գրքուկով², որտեղ ձեռագիրը կրում է 8 համարը։ Գրչության «ժամանակն ու տեղն անհայտ», գրիչն ու ստացողն անծանոթ, ուղղանկյուն երկաթագրով գրված մագաղաթյա այս ավետարանը, որն ունի 30,5×24 սմ մեծություն, 11 սմ հաստություն և 232 մագաղաթյա թերթ, Հ. Աճառյանը տեսել է «շատ հինցած, թուղթերը մեծ մասով թափված, փլացած, պատրուկած, եղբրքները սկզած, գրերը շատ տեղտեղ ավիրված և հետո վրային սև կամ կարմիր մելանով անցված, տառասխանները՝ քիչ և անշշան»³ վիճակով։ Այդպես էլ 1920-ական թվականներին այն բերվել է Երևանի գրական թանգարան (№ 208) և այնտեղից՝ Մատենադարան, ուր այժմ պահվում է առանձին տուփի մեջ և կրում 7739 համարը։

Հ. Աճառյանի «Յուդակում» բերված են ինչպես գլխավոր, այնպես էլ նորոգման հիշատակարանները և այլ հիշատակագրություններ. այսպես՝ «ԵՎ թուականին Հայոց (1111) վերստին նորոգեցի զԱւետարանս

դայս, որդիս Անտոնի Եղիա քահանայ»⁴։ «Ես Ներսէս մեղապարտ քահանա բաղում սիրով և ջանիւք ստացայ եւ վերստին նորոգեցի զսուրբ Աւետարանս թվ. 2 (1251)»⁵։ «Զնորհատ քահանայ... որ իւր հայալ արդենցն նորոգեց զսուրբ Աւետարանս»⁶։ «Եղեւ վերստին նորոգումն սուրբ Աւետարանիս ի թվ. Հայոց Պլթ (1390) ձեռամբ աւգնամեղ և սուտանուն քահանայի Յոհաննիսի»⁷ և այլ անթվական հիշատակարաններ⁸։

Նկարագրության վերջում Հ. Աճառյանը բերում է գլխավոր հիշատակարանի ընթերցանի մասերը.

¹ Մատենադարան, ձ. 7739, էջ 104բ։

² Մատենադարան, ձ. 7739, էջ 170բ։ Ներսէս քահանան ձեռագիրն ստացել է Հայոց ՈԶԷ=1238 թվականին։ 1251 թ. կնոջ մահվան առթիվ գրել է մի այլ հիշատակագրություն, ուր հիշում է նաև ձեռագրի նորոգման մասին։ Ներսէսի նորոգություններն ակներև են. նա ավելացրել է մագաղաթյա 4 կրկնագրերը (թերթ 5, 6, 102, 103), լուսանցքներում նշել ընթերցվածները և թանաքով անցել է այն ժամանակ խոնացած էջերի և տողերի վրայով։ Այդպիսի էջերից մեկի (204բ) ստորին լուսանցքում, նույն թարմ թանաքով գրել է։ «Զներսէս մեղապարտ յիշեցէք ի Քրիստոս»։ ՈԶԷ=1238 թվականը Հ. Աճառյանը կարդացել է ՈԶԷ=1228. տպագրական սխալի պատճառով ստացվել է 1328 թ. (Յուդակ, էջ 9)։ Գ. արք. Հովսեփյանը ընդունել է 1228 թ. և իր կազմած «Յիշատակարանք ձեռագրաց»-ի Ա հատորում հիշատակարանը գրել է այդ թվաշարքում։ (ՏԵՍ շիշատակարան № 393, սյուն 859—860)։

³ Անդ, էջ 63բ։

⁴ Անդ, էջ 104բ։ Նորոգումներից մեկի ժամանակ թափված 87 և 128—161 թերթերի փոխարեն ձեռագրում դրված են բոլորագիծ երկաթագիր նուրբ մագաղաթյա մի ավետարանի համապատասխան թերթերը և հարմարեցնելու համար, կտրել են թերթերի լուսանցքները։

⁵ Անդ, էջ 63բ. 179բ. 304բ։

¹ «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1896 թ., № 8 ձեռագրի նկարագրությունը, էջ 244—246։

² Յուդակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, կազմեց Նրաչեայ Հ. Աճառեան, Վիեննա, 1900 թ., էջ 8—10։

³ Հ. Աճառյան, Յուդակ, էջ 9։

1. Ողորմութեամբ
2. Քի կատարեցի...
3. Ե...ակի անբաղմ
4.աշխարհաց
5. ...բզ
6. [բան] ձեռամբ
7.
8.
9. Քանանա
10.
11.
12.
13. թեանն տն
14. Հայոցս աթա
15. թագաւորս
16. [թեան] Դաւթի վրաց
17. ... բարէ
18. թագաւորի ի

Առաջ բերեցինք հիշատակարանի առաջին սյունակը, որտեղ պատմական վկայություններն են և որտեղ լրացումներ և ուղղումներ են կատարում ինչպես Գ. արք. Հովսեփյանի, այնպես էլ մեր վերծանությունները: Հիշատակարանում ունենք միայն Դաւթի՝ վրաց թագաւորի անունը, որպես պատմական անձնավորություն: Սրանից ելնելով Հ. Աճառյանը եզրակացնում է. «Ձեռագրին թվականը որոշ չէ, որովհետև հիշատակարանին հետ եղծված է, բայց հիշատակագրություններու մեջ կը գտնենք ՇԿ թվական մը (1111), իբր առաջին նորոգութեան թվականն, որմէ 121 տարի հանելով կ'գտնենք գրքին գրության մոտավոր թվականը 990 (մյուս նորոգությունները իրարմէ 127—152 տարի հետո են)»⁹: Հիշատակարանի մեջ հիշված է նույնպես վրաց բարեպաշտ Դավիթ թագաւորը: Վրաց Դավիթ անվամբ թագաւորներն են՝ Դավիթ Ա (876—881), Բագրատ Բ կամ Դաւիթ (964), Դավիթ Բ վերանորոգիչ (1089—1125)¹⁰: «Ուրեմն,—գրում է Հ. Աճառյանը,—Ժ—ԺԱ դար ապահովապես կրնանք դնել»¹⁰: Հ. Տաշյանը սույն տվյալների հիման վրա և 14-րդ տողի «աթա»—«աանա» ենթադրելով և կարծելով, որ «Անանիա» հայոց կաթողիկոսն է հիշվում (Անանիա Մոկացի, 941—965 թթ.), ձեռագիրը համարել է 964 թվականի ընդօրինակություն և դասել հնագույն ավետարանների շարքը¹¹:

Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը «Յիշատակարանը ձեռագրաց»-ի Ա հատորում, հրատարակելով համապատասխան հիշա-

տակարանները¹², ձեռագրի մասին համառոտ տեղեկություններում գրում է. «Գրիչ և տեղանհայտ, ժամանակ ժ դարի վերջ (992—999)» և բերում է հիշատակարանի իր վերծանությունը. (փակագծերում լրացումները Գարեգին կթղ. Հովսեփյանին են):

1. [ՇԿ] յոճաւ Ե [ա]նապառ ողորմութեամբ [բ]ն Քրիստոսի կատարեցի չոր
2. [bf] կտակեալն բազմաւ...
3. աշխարհաց
4.
5.
6.
7.
8.
9.
10.
11. ի հա
12. [յրապետու]թեանն Տ[եան]ն
13. [Սարգսի] Հայոց Կաթաւ
14. [իկոսի եւ ի] թագաւորու
15. [թեան Հայոց Գագկայ եւ]
16. Դաւթի վրաց
17. [կոռապաղա]ւի բարէ
18. [պաշտ թագ]աւորի ի մեծոց
19. ողի աիւր¹³:

Այս վերծանության մեջ հայոց կաթողիկոսը արդեն Սարգիսն է, իսկ Դավիթ թագաւորը՝ Դաւիթ Կյուրապաղատը: Նույնիսկ այստեղ հայտնվել է «Հայոց Գագկայ» տողը, որ բնագրում ընդհանրապես բացակայում է: Ինչպես տեսնում ենք, չեն համընկնում նույնիսկ այս և նախորդ վերծանության տողերը (Տե՛ս համարները)¹⁴:

Ծանոթագրության մեջ Գարեգին կաթողիկոսը գրում է.

«Թեպետ այսպես եղծված է հիշատակարանը, բայց հնարավոր է կոահել գրութեան մոտավոր ժամանակը: Ձեռագիրը նորոգված է ՇԿ=1111 թվականին, ուրեմն և ԺԲ դարու առաջին քառորդի վրաց Դաւիթ արքայի մասին խոսք լինել կարող չէ, այլ միայն Տաշի Դաւթի Կյուրապաղատի, որի կոչման բառի վերջին վանկի մնացորդն էլ «տի» ունենք իբրև ապացույց: Հ. Աճառյանը կարդացել է փոքր ինչ սխալ 11—14 տողերը, որից և Հ. Տաշյանը սխալ եզրակացության է հանգել: Ակնարկ մը հայ հնագրութեան վրա, էջ 21»¹⁵: (Տե՛ս վերը):

¹² Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարան ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, № 71, սյունակ 159—162, № 146, սյուն 307—310, № 339, սյուն 122 Բ.:

¹³ Յիշատակարանը, սյունակ 159—160:

¹⁴ Այս երկուսն էլ իրենց հերթին տարբերություն են տալիս բնագրի հետ (Տե՛ս մեր վերծանությունը):

¹⁵ Անդ. սյունակ 162:

⁹ Հ. Աճառյան, Ցուցակ, էջ 10:

¹⁰ Անդ, էջ 9:

¹¹ Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրութեան վրա, Վիեննա, 1889, էջ 20—21:

Ինչպես Հ. Աճառյանը, նույնպես և Գ. արք. Հովսեփյանը ընթերցելիս չեն հայտնաբերել ոչ դրուժյան թվականի նշմարներ, ոչ տեղի հիշատակություն. սակայն ուշադիր ընթերցումը այդ անելու հնարավորություն ընձեռում է: 11-րդ տողի «Ի ՀԱ» — բառամասից առաջ որոշակի կարգացվում է «նս Հայոց» իսկ նախորդ տողում «Մ թուականու» բառերը: Թանաքը գնացել է, բայց մագաղաթի վրա մնացել են տառերի հետքերը, որոնք լրիվ կարգացվում են՝ լույսի տակ թեքելիս: Մ տառից առաջ երևում է մի այլ տառի մարմին կազմող երկու գծերը, որոնք կարող են այդտեղ Մ կամ Ն տառերը լինել: Հաջվի առնելով Սարգիս հայոց կաթողիկոսի և Դավիթ Կյուրոպաղատի հիշատակությունը գրության ժամանակ, այդ տառը կարող էր ենթադրվում հիշատակարանի այդ հատվածը վերականգնում ենք այսպես.

[Ի Ն]Մ թուականու
[թեա]նս Հայոց [1001]ի Հա
[յրապե]տութեանն Տեառն
[Սարգ]սի Հայոց Կաթաղ
[իկոսի Ի] թագաւորու
[թեան]ն Դաւթի Վրաց
[Կիրո]պաղտի բարէ
[պաշտ թա]գաւորի

Հիշատակված հայոց կաթողիկոսը Սարգիս Ա Սեանցին է, որը գահակալել է 992—1019 թթ.¹⁶, իսկ «Վրաց Դավիթ թագաւորը»՝ Տայքի Կյուրոպաղատ Դավիթն է, որն իր իշխանությունն ընդարձակելու համար «թագաւոր անուանուեցաւ», որն իր և հպատակների համար արաբերենից հայերենի թարգմանելով «Պղնձե քաղաքի պատմությունը»¹⁷, Սա մահացել է 1000 թ. մարտի 21-ին¹⁸, Գրիչը, որն, ինչպես կտեսնենք, Բասենի գավառում է ընդօրինակել ձեռագիրը, չէր կարող Տայքի թագավորի մահվան մասին տեղեկություն չունենալ: Հավանաբար ձեռագիրն սկսել և գրել էր Դավթի կենդանության օրոք, ավարտել է, երբ մահացած էր, բայց մահը չի հիշատակել, որովհետև ձեռագիրն իրոք գրվել է նրա օրոք:

Հիշատակարանի բերված տողերից հետո, հաջորդ՝ 19-րդ տողից մնացած բառամասը Գ. արք. Հովսեփյանը միացրել է 18-րդ տողին: Այդ բառամասի «մեկնոց» ընթերցումը սխալ է, ձեռագրում «սենոյ» է գրված: Գրիչը ձեռագրի ավարտման ժամանակը նշելուց և

ժամանակի հոգևոր և աշխարհիկ տերերին հիշատակելուց հետո, պետք է հիշատակել գրչության վայրը, մանավանդ որ հիշատակարանի շարունակության մեջ՝ մյուս սյունակում էլ՝ այդ չկա: Տողը վերականգնում ենք այսպես «Ի [գաւառս Բա]սենոյ», «Ի» նախորդը նախորդ տողի վերջումն է: Ուրեմն գրչության վայրը Բասենոյ գավառն է:

Բայց այս սյունակում մենք ունենք կտրված և եղծված մի տող ևս, որը վերջանում է «Իաւր» տառակապակցությամբ: Այդ տառերից առաջ երևում է եղծված «Ջ» տառը, իսկ դրանից՝ առաջ՝ պատուվածքի եզրին կից՝ երկու տառերի մնացորդներ, որոնք, սակայն, անընթեռնելի են: Ջիււր-ը մեղ ոչինչ չի ասում: Ղ. Ալիշանի «Այրարատ» համագրության մեջ Բասեն գավառի ոչ մի տեղանուն չգտանք այդ տառակապակցությամբ: Սակայն այն իմաստավորվում է, երբ սկզբի տառերը կարդում ենք Կն և դրան ավելացնում Ջիւի՛ր բառամասը, ստանում ենք [Կն]ձիււր, Կնչիւր, Կնչիւր, որ կամ Կնչիւր տեղանվան նախնական ձևն է, կամ էլ գրիչը «Բ» գրելու փոխարեն գրել է «Ի»: Իսկ Կնչիւրը գտնվում է Բասենի արևելյան սահմանում, նրան կից Գարեղենից գավառում¹⁹, Մենք կարող ենք վերականգնել մոտավորապես նաև հիշատակարանի վերջին տողը [Ի գեաւոս Կն]ձիււր: Այսպիսով, Մատենադարանի № 7739 ձեռագրի գլխավոր հիշատակարանը²⁰ այսպիսի տեսք է ստանում:

[Շն]ոյ [հա]ւ [և ա]նս
[պ]առ ռդարմութեամբ
ն քրիստոսի կատարեցի չոր
եք [վ]տակեան բազմա
. . . աշխարհայ
. . . մք գաւեաա
(րուսս) (ծ)եռամբ
. . . յն քահանայ

[Ի Ն]Մ թուականու
[թեա]նս Հայոց Ի Հա
[յրապե]տութեանն Տեառն
[Սարգ]սի Հայոց Կաթաղ
[իկոսի Ի] թագաւորու
[թեան]ն Դաւթի Վրաց
[Կիրո]պաղտի բարէ
[պաշտ թա]գաւորի Ի
[գաւառս Բա]սենոյ


¹⁶ Մաղափա արք. Օրմանյան, Ազգապատում, պրակ Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1155—1158:

¹⁷ «Հանդէս ամսօրեայ», 1958, 1—4, էջ 21—48:

¹⁸ Մաղափա արք. Օրմանյան, Ազգապատում, պրակ Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1141—1175:

¹⁹ «Կնչուան վիճակ և քաղաքաւան է ի գլուխս Պայամ գետակի... և թէ ոչ այսպէս ի հնումն, այլ յաւելուածոյ իմն անտղոր մասնկամք լսի Կէշուր, կամ Կէշուր» (Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 47):

²⁰ Մատենադարան. Ա. 7739, էջ 232բ:



Մատենադարանի № 7739 ձեռագրի Ռիշատակարանը

[ի գեաղս Կե]շիաւ
 Երկրորդ սյունակ.
 Արդ ով Քրիստոս սկեն
 քանայք, յ[ար]ընթ
 [եռ]նայք եւ լու[սա]ւորի
 ք[ի սու]րբ պատուիրան
 էս սղաշեմ գամեն-
 իսեն յիշեալիք գի
 [ս]գրագմամեղս եւ զսն
 արժանս, որ թեպէտ
 եւ մանուկ եմ, բայց ծ
 երա[ց]եալ եմ ի մեղաց.
 ի մաքուր եւ յարժանաւ
 որ աղաւթս ձեռ թ[ե]ք
 եւ
 Քրիստոս յիւ գալստեանն՝
 եւ մերոյ տխմարութեանս
 եւ անմարթութեանս ան
 մեղադիր [եւրոք].
 եւ մեր Յիսուս
 Քրիստոս [ն]մա փառք եւ
 պատիւ յաւիտեա[ն]
 ամեն ա[մեն]


Այսպիսով՝ Մատենադարանի № 7739 ձե-
 ոագիր Ավետարանը գրվել է 1001 թվակա-
 նին Բասենի գավառի Կեշոր գյուղում, որն
 այն ժամանակ թերեւս, Բասենի մեջ էր

մտնում։ Գրչության այդ կենտրոնից միակ
 ձեռագիրն է այս, որ հայտնաբերվում է։ Այդ
 հարստացնում է գրչության հնագույն կենտ-
 րոնները մի անունով ևս։ Անհայտ են մնում
 միայն ձեռագրի գրիչն ու ստացողը, որոնց
 անունները պարունակող տողերը խիստ մաշ-
 ված են։



Բասենի գավառից ժ դարի սկզբներից
 (902 թվական) մենք մի այլ Ավետարան ևս
 ունենք, ինչպես ցույց տվեց Օ. Եզանյանը մի
 պատուհիկ-հիշատակարանի նոր և հաջող
 վերծանությամբ։

Մատենադարանում 6384 համարի տակ
 պահվում է նաև այն ձեռագիրը՝ որին պատ-
 կանում էր այդ հիշատակարանը։ Ձեռագրի
 երկրորդական հիշատակարանների և հնա-
 գրական տվյալների հիման վրա, Եզանյանը
 հանգեց այն եզրակացության, որ պատա-
 ուհիկը պատկանում է այդ ձեռագրին²¹, 6384
 ձեռագիրը դրված է Բասենի գավառի Որդրու-
 քաղաքում (հետագայում՝ Դու բնակավայր-

Մի էջ № 7739 ձեռագրից՝ վերամորոգված ժգ.
դարում

²¹ Օ. Եզանյան, Անձնագիրը գտնում է տիրույթ, «Գրա-
 կան թերթ», 1965 թ., հունվար, № 2։

բը)²², գրիչն է Սարգիսը, իսկ ստացողը՝ Մես-
րոբի որդի Սարկավազը²³:

Այս երկու ձեռագրերի գրչության կենտրո-
նից հեռու չպետք է ընդօրինակված լինի նաև
հայերեն հնագույն ձեռագիրը՝ Լազարյան
Ավետարանը, որի գրիչը Վանանդեցի է:
Թերևս այն ընդօրինակվել է Բասենի կամ
Արշարունիքի վանքերից մեկում: Այրարատ
նահանգի այս մասի (Բասեն, Արշարունիք,
Գաբեղանք և այլն) դավառները հնուց
հայտնի էին իրենց գրչության կենտրոննե-
րով, և պատահական չէ, որ «հնագույն տե-
ղեկությունը հայ մատենագրության մեջ
գրչության դպրոցների մասին»²⁴ Արշարուն-
յաց գավառից է, և դալիս է Ե—Ձ դարերից:
«Ու զԳաբեղանից գտնուեալան ասանդն
հրամայեաց ի սուրբ տեղիսն և զԱրշարու-
նեաց հայրապետի ասանդն հրամայեաց ի
Վանկոյս, ի պէտս վարդապետացն, որք
ղգրչութեան արուեստն ունէին... և զսուրբ
գիրսն՝ յարինէին, որք էին երեսուն և վեց
վարդապետք»²⁵: Հիշյալ երկու ձեռագրերը
հարստացնում են այդ վայրի գրչության
կենտրոնների պատմությունը և ցույց տալիս,
որ մշակութային կյանքը կենսունակ էր այդ-
տեղ նաև Թ—ԺԱ դարերում:



Ի տարբերություն 887 թ. գրված Լազարյան
Ավետարանի բոլորագիծ երկաթագրի, 902 և
1001 թվականների Ավետարանները գրված
են ուղղագիծ երկաթագրով: Ս. Քուլանջյանը
հակադրվելով հնագրության մասնագետների
այն տեսակետին, «ըստ որի պաշտամունքա-
յին ձեռագիրը և հատկապես ավետարանները
մինչև ԺԳ դարի սկիզբը բացարձակապես
մնասրբյան բոլորագիծ երկաթագրով են
գրված եղել» և հիմնվելով Մատենադարա-
նում պահպանվող անթվական, Ժ—ԺԱ դա-
րերին վերագրվող ուղղագիծ երկաթագիր
Ավետարանների բազմաթիվ պատահականների,
ինչպես նաև ամբողջական Ավետարանների
վրա, հերքում է այդ տեսակետը²⁶:

²² Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 17:

²³ Այս գեղեցիկ ուղղագիծ երկաթագիր մագաղաթյա
Ավետարանը հետագայում խաթարվել է Դավիթ գրչի
կողմից, որը հին տառերի վրայով անցել է բոլորգրով:
Բարեբախտաբար անխաթար են մնացել մի քանի հի-
շատակագրություններ և լուսանցքների համաբարբառ-
ների մի մասը:

²⁴ Գ. Կարադիկոս Հովսեփյան, Յիշատակարանք, հտ.
Ա, սյուն. 7, ծթ. 3:

²⁵ Անգ, էջ 7:

²⁶ Ս. Քուլանջյան, Նորահայտ պատահականներ Կյուրեղ
Նրուսաղեմացու Թ գրքի մի գրչագրից: Քաների Մա-
տենադարանի, № 5, Երևան, 1960 թ., էջ 236:

Հիշյալ № № 6384 և 7739 Ավետարաննե-
րը, որոք գրված են ուղղագիծ երկաթագրով
և գրչության որոշակի թվական ունեն, հիմ-
նավոր և անառարկելի ապացույց են այն
բանի, որ ուղղագիծ երկաթագիրը, բոլորա-
գիծ երկաթագրի հետ հավասարապես, օգ-
տագործվել է կրոնապաշտամունքային գրա-
կանության մեջ: 902 թ. գրված № 6384 ուղ-
ղագիծ երկաթագիր Ավետարանը միայն 15
տարով է զիջում հայոց հնագույն թվակիր
բոլորագիծ երկաթագիր Լազարյան Ավետա-
րանին: Նրանց գրիչները միևնույն սերունդին
են պատկանում:



Մատենադարանի № 7739 ձեռագիրն ունի
հնագրական մի այլ կարևոր նշանակություն
ևս: Այս Ավետարանի համաբարբառները
գրված են հին բոլորագրով, ինչպես ցույց են
տալիս համաբարբառի խորաններից մնա-
ցած միակ էջը և լուսանցքներում գրված հա-
մաբարբառները: Բոլորգիրը, որից առանձին
տառերի հանդիպում ենք դեռևս Լազարյան
Ավետարանի լուսանցքներում, և որը «նույն-
քան հին է որքան մյուս տառատեսակները»²⁷
երբեմն գործածվում է ավետարանների հա-
մաբարբառները և պրակները նշանակելու,
իսկ ավելի շատ՝ այլ բովանդակության ժողո-
վածուներ ընդօրինակելու համար: Բոլորգի-
րը աստիճանաբար ճանապարհ է հարթում
դեպի կրոնապաշտամունքային գրականու-
թյունը և հետագայում դառնում գրչության
արվեստի հիմնական գրատեսակը:

Հետաքրքիր է նաև այն, որ ձեռագրում
տառերը գրված են ոչ թե տողագծի վրա, այլ
ներա տակ, տողագիծը չորափում է տառերի
վերին ծայրը: Այդպես է նաև Մատենադա-
րանի 1018 թվականին գրված № 4804 բոլո-
րագիծ երկաթագիր Ավետարանը²⁸, Այն շատ
տարածված եղանակ էր Մեծոփականից
դպրոցում՝ ԺԵ դարում:

7739 ձեռագրում մի մանրանկար կա
միայն. առաջին թերթի երկրորդ երեսում:
Շրջանակի մեջ նկարված է Ավետման տեսա-
րանը՝ Գաբրիել հրեշտակը և Աստվածամայ-
րը՝ ծորակից սափորի մեջ շուր լցնելիս: Ա-
վետման այս տարբերակը առնված է պարա-
կանոն Ավետարանից²⁹:

²⁷ Գ. Կարադիկոս Հովսեփյան, Իններորդ դարի ձե-
ռագրական մի հաստակտոր և Ատոմ Անձեաջյաց Իշ-
խան, «Էջմիածին», 1946 թ., № 8—10, էջ 53:

²⁸ Մատենադարան, ձ. 4804:

²⁹ Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց:
Անկանոն գիրք նոր կտակարանաց, Վենետիկ, 1898 թ.,
էջ 14: